# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 34-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ-06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 23-ի թիվ-06 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար ______________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի օգոստոսի 23-ի N34-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ-06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ-06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
35. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-009-0105-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
36. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-009-0157-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
38. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 35-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-009-0105-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ կադաստրային ծածկագիր՝ 04-009-0105-0005, հողամասի չափը՝ 0,7344 հեկտար, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, հողատարածքը:
2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի՝ 49570 (քառասունինը հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամ 700%-ի չափով՝ 347000 (երեք հարյուր քառասունյոթ հազար) դրամ: Աճուրդի մեկ քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 17350 (տասնյոթ հազար երեք հարյուր հիսուն) դրամ: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ի չափով՝ 173500 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 3000 (երեք հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ____________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 36-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-009-0157-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ կադաստրային ծածկագիր՝ 04-009-0157-0005, հողամասի չափը՝ 0,7402 հեկտար, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, հողատարածքը:
2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի՝ 49965 (քառասունինը հազար ինը հարյուր վաթսունհինգ) դրամ 700%-ի չափով՝ 349745 (երեք հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր քառասունհինգ) դրամ: Աճուրդի մեկ քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 17490 (տասնյոթ հազար չորս հարյուր իննսուն) դրամ: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ի չափով՝ 174900 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր) դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 3000 (երեք հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 37-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդավար նշանակել Գերասիմ Մխիթարյանին, արձանագրող՝ Քնարիկ Եղիազարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ____________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի օգոստոսի 23-ի N37-Ա որոշման

# ԿԱԶՄ
# ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի անդամներ - | Մխիթարյան Գերասիմ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու անդամ |
| | Հովհաննիսյան Ներսես - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու անդամ |
| | Ստեփանյան Արամ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու անդամ |
| | Եղիազարյան Քնարիկ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ |
| | Խաչատրյան Վարուժան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի կոմունալ ծառայող |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 38-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությունները՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեից 60000 Հայաստանի Հանրապետության դրամ գումար տրամադրել Այգեկ համայնքի անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի օգոստոսի 23-ի N38-Ա որոշման

# ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

- Սարգսյան Քրիստինե Կարապետի – 30000 դրամ,
- Ավետիսյան Սամվել Դավթի – 30000 դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 39-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին>> N44-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի օգոստոսի 23-ի N39-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Բյուջեի եկամուտների մասով՝
   1) Համայնքի բյուջեի՝ հողի իրացումից մուտքեր եկամտատեսակին մուտքագրել 7161045 դրամ գումար:
   2) Գույքի վարձակալություն եկամտատեսակից պակասեցնել 180,0 հազար դրամ:
2. Բյուջեի ծախսերի մասով՝
   1) Բյուջեի ֆոնդային մասով մուտք եղած 7161,045 հազար դրամն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝
      1.1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժնի 1.6.1 բաժնի
         ա. 5112 հոդվածին – 4861,045 հազար դրամ,
         բ. 5129 հոդվածին – 980,0 հազար դրամ,
         գ. 5133 հոդվածին – 250,0 հազար դրամ,
         դ. 5134 հոդվածին – 1070,0 հազար դրամ:
   2) Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 715,0 հազար դրամն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝
      2.1) Կառավարման ապարատի՝ 1.1.1 բաժնի
         ա. 4212 հոդվածին – 350,0 հազար դրամ,
         բ. 4213 հոդվածին – 15,0 հազար դրամ:
      2.2) Փողոցային լուսավորություն՝ 6.4.1 բաժնի
         ա. 4239 հոդվածին – 150,0 հազար դրամ,
         բ. 4251 հոդվածին – 100,0 հազար դրամ:
      2.3) Հրատարակչություն՝ 8.3.2 բաժնի 4234 հոդվածին 100,0 հազար դրամ:
      2.4) Գույքի վարձակալություն եկամտատեսակից պակասեցված 180,0 հազար դրամ գումարի չափով պակասեցնել բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

***Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.***

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի առաջին, երկրորդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.***

Որոշումը մշակվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ղեկավարի կողմից:

***Ակնկալվող արդյունքը.***

1. Բյուջեի եկամուտների մասով՝
   1) Համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից փաստացի մուտքեր 7161,045 հազար դրամ:
   2) Գույքի վարձակալության պայմանագիրը չեղյալ համարվելու պատճառով պակասեցնել 180,0 հազար դրամ:
2. Բյուջեի ծախսերի մասով՝
   1) Համայնքի կառուցվող շինությունների համար 4861,045 հազար դրամ:
   2) Վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար 980,0 հազար դրամ:
   3) Նոր փողոցների գազիֆիկացման նպատակով նախագիծ-նախահաշիվ կազմելու համար 1320,0 հազար դրամ:
   4) Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարվելիք լրացուցիչ ծախսեր՝
      4.1) Էլեկտրաէներգիայի ծախսեր 350,0 հազար դրամ:
      4.2) Խմելու ջրի ծախսեր 15,0 հազար դրամ:
      4.3) Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 150,0 հազար դրամ:
      4.4) Ընթացիկ նորոգման ծախսեր 100,0 հազար դրամ:
      4.5) Տեղեկատվական ծառայությունների ծախսեր 100,0 հազար դրամ:

***Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.***

Քանի որ համայնքի բյուջեի ընդունումն ավագանու կողմից նորմատիվ որոշում է, ուստի համայնքի բյուջեի փոփոխության վերաբերյալ ավագանու որոշումը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար:

*ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ____________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

# ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

*ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* __________ *ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*